ԷԼԻՆԱ ՄԻՐԶՈՅԱՆ
ՀՅԹԻ գիտաշխատող, ԵՊՀ դասախոս
Բանասիրական գիտությունների թեկնածու
elina-mirzoyan@mail.ru

ԲԱՔՎԻ «ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ»-Ն՝ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանալի բառեր՝ Բաքու, Մարդասիրական ընկերություն, Ալ. Մանթաշյանց, գաղթականներ, Ստեփանոս Նազարյանց:

Մեր պատմության մեջ ազգասիրության, հայանվիրումի գործնական արտահայտության, ազգային բարեգործության հզոր ներշնչման համար բազմաթիվ հայկական բարեգործական ընկերություններ, կազմակերպություններ, հիմնարկություններ, ինչպես նաև անհատներ և այլ կառույցներ են ծառայել: Այդ հաստատություններից շատերը մեզ են թողել մարդասիրական ավանդության օրինակելի ժառանգություն և, անկախ իրենց գտնվելու վայրից և գործունեության պայմաններից, իրապես ազգային բարեգործության ու իմացական լուսավորության կոթողացած կենտրոններ են դարձել: Կտակներ ու նվիրատվություններ, մեծ ու փոքր, բոլորն էլ բխել են այն հավատքից և համոզումից, որ հայ ազգն արժանի է ապրելու, արարելու, որովհետև օժտված և տաղանդավոր ազգ է՝ աշխարհում իր ծանրակշիռ տեղն ունենալու համար, ինչպես նաև կտակարարներ և նվիրատուներ, առաքյալներ, որոնք իրենց թողած ավանդով կարողացել են ազգապահպան բարեգործության և քրիստոնեական գաղափարապաշտության մշակույթը ձևավորել:

Այդպիսի ընկերություններից է նաև Բաքվի «Հայոց Մարդասիրական ընկերութիւն յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի»-ն:

Այսպես, Ապշերոնյան թերակղզում, որ միջնադարում կազմում էր պատմական Շիրվանի մի մասը, հայերը բնակվել են դեռևս վաղ միջնադարից և ունեցել են իրենց պաշտամունքային կենտրոնները: XIV-XV դդ. արաբ աշխարհագրագետ և ճանապարհորդ Աբդ ար--Ռաշիդ ալ Բաքուվին[1] նրանց ավանդաբար կոչում է քրիստոնյաներ և հաղորդում. «Բաքու քաղաքի մերձակայքը բազմաբնակավայր է, դրանից յուրաքանչյուրն ունի ամրացված միջնաբերդ՝ ամրապինդ պատերով: Այդ գյուղերի բոլոր բնակիչները քրիստոնյաներ են (հայեր)»[2]: Թերակղզու հայաբնակ վայրերի շարքում հայ ժողովրդի պատմության մեջ առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Բաքու քաղաքը: Այդտեղ հայերը բնակվել են հնագույն ժամանակներից: Ըստ ավանդության՝ Հայոց Արևելից կողմանց (Արցախ, Ուտիք[3]) Վաչագան Բ. Բարեպաշտ թագավորի (485–510/23) ձմեռանոցն էր Բաքուն, 500 թվին Մեծ Հայքի Փայտակարան նահանգի Բագավան գավառն իբրև օժիտ նա նվիրել է դստերը՝ Վարսենիկին[4]: Քաղաքում նա նախաձեռնել է առաջին հայկական եկեղեցու կառուցումը՝ «Բագուայ հին եւ նշանաւոր եկեղեցի եւ ուխտատեղի...» Ս. Աստվածածինը, որը գտնվում էր ծովեզերքի Հին թաղում՝ բերդի մոտ[5]: Վերջին անգամ այն վերանորոգվել է 1789 թ. նախիջևանցի վաճա-

---

[1] Տե՛ս *Энциклопедический словарь,* под ред. проф. И. Андреевскаго, т. 11А, изд-во Ф. Брокгауз, И. Ефрон, СПб., 1891, էջ 774:

[2] Տե՛ս *Абд ар-Рашид ал-Бакуви, Китаб тахлис ал-асар ва аджа'иб ал-малик ал-Каххар,* М., 1971, էջ 89–90:

[3] Տե՛ս **Ստեփանյան Գ.,** *Բաքու քաղաքի հայության պատմությունը* (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Ե., 2011, էջ 37:

[4] Տե՛ս *Հանրամատչելի հանրագիտական բառարան,* հ. Ա, կազմեց՝ **Հ. Առաքելյան,** Թիֆլիս, 1915, էջ 199:

[5] Տե՛ս **Սմբատեանց Մ.,** *Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց եւս եւ քաղաքացն եւ գիւղերից որք ի Շամախւոյ թեմի,* Տփխիս, 1896, էջ 373:

ական Մարկոս Թառումյանի, շուշեցի վաճառականներ Զոհրաբ, Հովհաննես և Կարապետ Թումայանների նախաձեռնությամբ[6]: Հայկական եկեղեցու գոյությունն արդեն իսկ վկայում է վաղ միջնադարյան Բաքվում հայ համայնքի գոյության մասին: Եկեղեցին կանգուն է մնացել մինչև 1992 թ. Արցախյան պատերազմի ժամանակաշրջան. Բաքվում աշխատած դիվանագետներից մեկն ականատես է եղել, թե ինչպես էր գետնին հավասարեցվում Կույս Մարիամ մատուռը,[7] որի տեղում թեյարան է կառուցվել[8]:

Բաքվում հայերը ծավալել են տնտեսական, առևտրական ու շինարարական լայնածավալ գործունեություն՝ աչքի ընկնելով հատկապես նավթի արդյունաբերության ասպարեզում, որն առանձին ուսումնասիրության և հետաքրքրության թեմա է: Այդուհանդերձ, հայ հասարակական կյանքում ձեռնարկվել են բարեգործական շարժման տեսքով դրսևորվող դրական և առաջադիմական մեծ տեղաշարժեր. ծնունդ են առել բարեգործական և հասարակական մի շարք կազմակերպություններ:

Յուրաքանչյուր ժողովրդի առաջադիմությունն առաջնորդվում է պատմական ժամանակաշրջանի ուղեգծով, և որն էլ ծնում է այդ ժամանակահատվածի պահանջմունքով գործող անձանց: Այդպիսին էր ականավոր հրապարակագիր, մտավորական Ստեփանոս Նազարյանցը: Նա 1859 թ. «Հյուսիսափայլ» ամսագրում տպագրում է «Հայերի կոչումն մարդկութեան մէջ» խորագրով նշանավոր և շրջադարձային հոդվածը, որով առաջարկում է բարեգործական մի ընկերություն ստեղծել՝ լուսավորություն տարածելու նպատակով,

---

[6] Տե՛ս **Ստեփանյան Գ.,** *Համառոտ ակնարկ Բաքու քաղաքի հայկական եկեղեցիների պատմության,* «Հայոց պատմության հարցեր», Ե., 2007, էջ 153:

[7] Տե՛ս **Թոմաս դե Վաալ,** *Սեւ այգի: Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության եւ պատերազմի միջով,* Ե., 2007, էջ 155:

[8] **Ստեփանյան Գ.,** *Համառոտ ակնարկ Բաքու քաղաքի հայկական եկեղեցիների պատմության,* էջ 153:

քանզի կրթությունը մշտապես եղել է ազգային առաջնահերթություն, տարբեր ժողովուրդների մեջ մրցունակ լինելու, հետևաբար և ինքնապահպանության լավագույն երաշխիք[9]: Նույն կոչով, սակայն առավել հանգամանալից, նա հանդես է գալիս ամսագրի 1862 թ. համարներից մեկում: «Եթէ մեր սիրելի Հայերը կամենում են մի հաստատուն և տեւողական բարեգործ առնել ազգի մէջ, այդ կարելի է միայն ընկերութեամբ, միաբանութեամբ, որոց մէջ միայն դրած է մարդկային մեծագործութեան բոլոր զօրութիւնը»[10], - գրում է Ստ. Նազարյանցը: Թերևս չենք կարող հստակ ասել՝ այս նշանավոր առաջարկության արձագանքն էր, արդյոք, Նոր-Նախիջևանում հիմնադրված հայ բարեգործական ընկերությունը, կամ արդեն 1860 թ. Կ. Պոլսում հիմնադրված հայկական բարեգործական ընկերությունը, որը, սակայն, երկար չկարողացավ պահպանել իր գոյությունը:

Ստ. Նազարյանցի կոչին արձագանքում է Բաքվի նահանգի բժշկապետ թիֆլիսահայ Դավիթ Հարությունի Ռոստոմյանցը (1820–1869): Նա իր առջև տեսնում էր գործունեության լայն ասպարեզ՝ սպասելով միայն նյութական օժանդակության, որ կարողանար ծառայել մի այնպիսի գործի, որ է՝ «լուսաւորութիւն եւ բարեգործութիւն տարածել խաւար ամբոխի մէջ»[11]: Նրան հաջողվում է գտնել Բաքվի 12 ազդեցիկ հայ համախոհների՝ թիֆլիսահայ Ալեքսեյ Տեր-Ղուկասյանցը, Բաքվի հայ Սարգիս Այվազյանցը, շամախեցի Գևորգ Լալայանցը, շուշեցիներ Մովսես Զոհրաբյանցը, Ներսես Կրասիլնիկյանցը, Գրիգոր Թումայանցը, Մուսայել Շահգեդանյանցը, Սարգիս Տեր-Գրիգորյանցը, Հակոբ Ապրեսյանցը, Դավիթ

---

[9] **Նազարեանց Ս.,** *Հայերի կոչումը մարդկութեան մէջ. «Հիւսիսափայլ»,* Մոսկվա, 1859, յունուար, ամսատետրակ 1, էջ 11:

[10] *«Ստեփաննոս Նազարեանի երկերը»,* հ. Ա., Կովկասի հայոց հրատարակչական ընկերություն, №15, Թիֆլիս, 1913, էջ 279:

[11] **Գալստեանց Ա.,** *Պատմական համառօտ տեսութիւն Բազուայ Հայոց Մարդասիրական ընկերութէան 25-ամեայ գործունեութեան,* Բազու,1891, էջ 6:

Ադամյանցը, Օհանջան Հախումյանցը և Սարգիս Գրիգորյանցը. մարդիկ, ովքեր գերազանցապես զբաղվում էին տնտեսական գործունեությամբ՝ նավթի արդյունաբերությամբ, առևտրով, արտադրությամբ: Վերջիններս ներդրեցին ու ձևավորեցին 12.650 ռ. անձեռնմխելի դրամագլուխ: Հարկ ենք համարում ստորև բերել 13 հիմնադիրների անվանացանկը և նրանցից յուրաքանչյուրի ստորագրած գումարաչափի ցուցակը՝

1. Դ. Ռոստոմյանց-500 ռ.
2. Ն. Կրասիլնիկյանց-2000 ռ.
3.Ա.Տեր-Ղուկասյանց-5000 ռ.
4. Մ. Զոհրաբյանց-600 ռ.
5. Մ. Շահգեդանյանց-700ռ.
6. Գր. Թումայանց-500 ռ.
7. Ս. Այվազյանց - 500 ռ.
8. Ս. Տեր-Գրիգորյանց-700 ռ.
9. Գ. Լալայանց-750 ռ.
10. Հ. Ապրեսյանց-300 ռ.
11. Դ. Ադամյանց-500 ռ.
12. Օ. Հախումյանց-300 ռ.
13. Ս. Գրիգորյանց-300 ռ.:

Այսպիսով՝ 1862–1864 թթ. հղանում և ծնվում է «Հայոց Մարդասիրական ընկերութիւն յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի» բարեգործականը՝ լուսավորական, մշակութային և բարեսիրական գործունեություն ծավալելու նպատակով: Շուրջ երկու տարի կատարվեց նախապատրաստական դժվարին աշխատանք, և 1864 թ. մայիսի 21-ին կայսերական թույլտվությամբ հաստատվեց «Մարդասիրական ընկերության» կանոնադրությունը՝ տալով նրան «Լուսաւորչի տիտղոսը» կրելու իրավունքը[12]: Այն կազմել են Ռոստոմյանցը և

[12] Տե՛ս անդ, էջ 7–8:

Զոհրաբյանցը: Ըստ նորաստեղծ ընկերության նորահաստատ Կանոնադրության՝ ընկերությունն ունեցել է հիմնադիր, պատվավոր, անփոփոխ և տարեկան անդամներ: Ընկերությունը ղեկավարել են հիմնադիր անդամները, խորհուրդը (3 տարի ժամկետով ընտրված նախագահը և 8 անդամները), ընդհանուր ժողովը: Այն իրավունք է ունեցել գործելու Ռուսական կայսրության հայաբնակ վայրերում և հաշվետու է եղել Կովկասի փոխարքային ու Բաքվի նահանգապետին[13]:

Ընկերության նշանաբանն էր՝ «Սեր առ մարդիկ»[14]:

Իր գործունեության առաջին շրջանում՝ 1864 թ. մայիսի 21-ից մինչև 1870 թ. հունվարի 25, նախագահել է ընկերության հիմնադիր Դ. Ռոստոմյանցը: Նրան հաջորդող նախագահներն էին Մովսես Զոհրաբյանցը (1870–1873), Պավել Շամիրի Մելիք-Բեգլարյանցը (1873–1876), Ավետ Մամիկոնյանը (1876–1879), Սամվել Բաղիրյանը (1879–1882), Գրիգոր Թումայանցը (1882–1885), Քրիստափոր Անտոնյանը (1885–1889), Սարգիս Հարությունյանը (1889–1905), Կոստանդին Խատիսյանը (1905–1910), Միքայել Պապաջանյանը (1911-1913), Հայկ Տեր-Միքայելյանը (1913–1920)[15]:

«Մարդասիրական ընկերության» նյութական միջոցները գոյացել են հիմնադիր կապիտալից, նվիրատվություններից, անդամավճարներից, կապիտալի շահութատոկոսներից, շարժական և անշարժ գույքի եկամուտներից, երեկույթների, համերգների, ժողովրդական տոնահանդեսների կազմակերպման գումարներից:

Ընկերությունը հաջողության իր բարձրակետին է գտնվել գործունեության առաջին իսկ շրջանից: 1860-ական թվականներին այն

---

[13] Տե՛ս «Устав человеколю биваго общ ества во имя св. Григория просветителя Армении», СПб., 1865, էջ 4–30, 7:

[14] **Դադայան Խ.,** *Հայերը եւ Բաքուն (1850-ական թթ. – 1920 թ.)*, Ե., 2006, էջ 66:

[15] Տե՛ս *«Отчет о деятельности правления Бакинского арм янского человеколю бивого общ ества за 1902 г.»,* Баку, 1903, с. 2–9.

նյութական օգնություն է ցուցաբերել Բաքվի հայոց երկսեռ դպրոցներին, գաղթականներին, աղքատներին և հիվանդներին, օրիորդաց դպրոցներին, հայ լրագիրներին, գործավարական և տնտեսվարական գործերին:

1870–1873 թթ. ընկերությունն ընդլայնում է իր գործունեության շրջանակները: 1870 թ. բացում է իգական դպրոց, որտեղ աղքատ հայ աղջնակները սովորում էին հայերեն, ռուսերեն և կար ու ձև (մինչև Առաջին աշխարհամարտը նրանց թիվը 400-ի էր հասնում), հիմնում է «Արոր» տպարանը՝ դասագրքեր տպագրելու և սովորողներին անվճար բաժանելու համար: Տպարանը նաև թանգարան էր, որտեղ հավաքել են ձեռագրեր, հնատիպ գրքեր, հայ գործիչների արխիվներ: Նույն թվականին է բացվում Բաքվի առաջին հանրային գրադարանը, իսկ 1880 թ.՝ կից ընթերցասրահ: Գրադարանից և ընթերցասրահից օգտվել են Բաքվի աշխատավորները՝ շուրջ 32.700 մարդ: 1914 թ. գրադարանն ունեցել է 21.800 միավոր գիրք, 68 անուն պարբերական: 1920 թ.-ից հետո գրադարանը վերանվանվել է Հանրապետական հանրային գրադարան, որի հայկական բաժինը դադարել է գործել 1960-ական թվականներին: 1894 թ.-ից ստեղծվել է գրական ֆոնդ: Գրադարանում տարբեր տարիներ աշխատել են Շիրվանզադեն և Լեոն[16]: Բացի տպարանից և իգական դպրոցից՝ ընկերությունը 1870 թ. նավթարդյունաբերող Կրասիլնիկյանների տանը հիմնեց քաղաքի հայկական թատրոնը (420 նստատեղով): Մինչև 1918 թ. բեմադրվել են հայ, ռուս և արտասահմանյան դրամատուրգների տասնյակ պիեսներ: Թատրոնի բեմում հանդես են եկել հայ լավագույն դերասաններ Սիրանույշը, Ազնիվ Հրաչյան, Հ. Գ. Զարիֆյանը և այլք[17]:

---

[16] Տե՛ս *ՀՍՀ*, հ. 7, Ե., 1981, էջ 307:
[17] Տե՛ս *ՀՍՀ*, հ. 2, Ե., 1976, էջ 344:

Իր գործունեության ամբողջ ընթացքում ընկերությունն ունեցել է երեք շինություն: Սկզբնական շրջանում ընկերությունը տեղակայված էր մասնավոր անձանց տներում,[18] ինչը դժվարություններ էր ստեղծում աշխատանքի արդյունավետ կազմակերպման համար: Եվ 1871–1873 թթ. նորակառույց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արտաքին սրահի դատարկ մերձակայքում (Գիմնազիչեսկայա փողոց, թիվ 119) կառուցվում է մեկուկես հարկանի շենք, որտեղ հանգրվանում են վարչության գրասենյակը և դպրոցները: Շենքն ունեցել է 13 լուսավոր և հարմարավետ սենյակ, որտեղ տեղակայվել են Ս. Հռիփսիմյան օրիորդաց և Ս. Մեսրոպյան արական եկեղեցական-ծխական դպրոցները, տպարանը և գրադարան-ընթերցասրահը[19]: Սակայն 1886 թ. ընկերության շենքը հրդեհվում է, և 1888 թ.-ից սկսվում է նոր եռահարկ շենքի շինարարությունը: Այն կառուցվել է հիմնականում Բաքվում հանգանակած գումարներով, որը կազմել է 115.155 ռ.: Իսկ արդեն XX դ. դարասկզբին ընկերությունը որոշում է Ստանիսլավսկայա փողոցում կառուցել նոր երկհարկ շենք, որն առավել հարմարավետ էր:

Մինչև 1875 թ. ընկերությունը գործունեություն է ծավալել հիմնականում Բաքվում: Այս ժամանակահատվածում այն օգնություն է ցուցաբերել հայ մտավորականությանը, Բաքվի երկսեռ դպրոցներին, ուսանողների, աշակերտների, Գանձակի և հարակից շրջանների հայ ծխական դպրոցներին միանվագ դրամով և գրքերով, Քիլվարի գյուղական դպրոցին, Բաքվի և Գանձակի աղքատներին: Ընկերությունը սատար է կանգնել որբերին և այրիներին, կերակրել է ծերերին ու անդամալույծներին, բժշկական օգնություն է ցուցաբերեր հիվանդներին, նպաստել գործազուրկ բանվորներին ու ար-

[18] Տե՛ս «Արարատ», Էջմիածին, 1871, Ա., էջ 336:

[19] Տե՛ս *«Краткий исторический очерк состояния и деятельности Бакинского человеколюбивого общества во имя Св. Григория Просветителя Армении с 1854 по 1896 гг.», составил член совета общества,* секретарь А. Калустянц, Баку, 1896, էջ 31:

հեստավորներին: Ընկերության ձեռնարկած բարեգործական շարժումն այնքան մեծ ծավալ և ազդեցություն է ձեռք բերում, որ նրան լծորդվում են նաև բարեգործական այլ կազմակերպություններ: Երբ Շամախիում 1872 թ. հունվարի 16-ին տեղի ունեցած աղետալի երկրաշարժի և սովի հետևանքով Իրանից տեղահանված հայությունը հանգրվանեց Բաքվում, տեղի հայ հասարակությունը, մտահոգված իր հայրենակիցների հետագա ճակատագրով, հնարավոր բոլոր միջոցներով փորձեց նվազեցնել նրանց անհամար կարիքները: Այդ օրերին հատկապես աչքի է ընկնում Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու ավ. քհն. Թադևոս Բուդաղյանցը: 1872 թ. ապրիլի 1-ին վերջինիս, ինչպես նաև գեներալ Հ. Լազարյանի, մայոր Զոհրաբյանցի և վաճառական Դիլդարյանցի նախաձեռնությամբ ստեղծվում է «Բաքվի հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձությունը», որի անդամներն էին Թադևոս քհն. Բուդաղյանցը, Գրիգոր Այվազյանցը, Գրիգոր Դիլդարյանցը, Անդրեաս Մելիքյանցը, Բաղդասար Սարգսյանցը, գործավար և հաշվապահ Սարգիս Վարշամյանցը: Նախագահն էր քահանա Բուդաղյանցը[20]: Հոգաբարձության կանոնադրությունը բաղկացած էր 5 կետից, որի 1-ին կետում ասվում էր. «Բագու քաղաքում կարգւում է նորահաստատ ընկերութիւն՝ աղքատաց և տնանկաց ապրուստը հոգալու. նրանցից ցաւագարներին ու հիւանդներին բժշկութեան հնարները գործ դնելու և մեռելոց թաղման կարգը կատարելու համար»[21]: Նրա առաջին գործը աշխատունակ գաղթականներին աշխատանքի տեղավորելն էր:

Ամեն ինչ, սակայն, հարթ ու խաղաղ չէր ընթանում: Բաքվի հայությանն առաջին լուրջ, ծանր հարվածը հասցրեց Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր պետ և Կովկասյան զինվորական շրջա-

---

[20] **Ստեփանյան Գ.,** *Համառոտ ակնարկ Բաքվի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու պատմության. ԼՀԳ*, թ. 3, Ե., 2009, էջ 48:

[21] «Մշակ», Թիֆլիս, 21. II. 1880:

նի հրամանատար իշխան Գրիգորի Գոլիցինը: Նրա հրամանով 1885–1886 թթ. փակվեցին Այսրկովկասի հայկական դպրոցները, արգելվեցին մայրենի լեզվով հրատարակությունները, հալածվեցին ազգային մշակույթի գործիչները՝ ուղեկցվելով բռնի ռուսացման քաղաքականությամբ: Փակվում են հայկական եկեղեցական դպրոցները, ինչպես նաև հայկական բարեգործական ընկերությունները՝ դրանց տալով ոչ թե բարեգործական, այլ քաղաքական բնույթ[22]: 1899 թ. նրա հրամանով Ռուսաստանի ներքին գործերի նախարար Ի. Լ. Գորեմիկինը հաստատում է ընկերության նոր կանոնադրությունը (ունեցել է 500 անդամ), որով այն զրկվում է մշակութային և ուսումնական գործունեության իրավունքից: Դրանով արգելվեց ընկերության լուսավորչական-մշակութային գործունեությունը և թույլատրվեց զբաղվել միայն բարեգործությամբ, այն էլ լոկ Բաքվի նահանգում, ինչի հետևանքով փոխվեց անգամ ընկերության անվանումը. կոչվեց «Բաքվի հայոց մարդասիրական ընկերություն»[23]: Այդ իսկ պատճառով ընկերությունն իր հավաքած գումարները նվիրաբերում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանին և Շուշիի հայոց հոգևոր դպրոցին: Եվ միայն 1913 թ. մայիսի 21-ին վերականգնվում են նախկին անվանումն ու գործունեության շրջանակները[24]:

Այս արգելքները, սակայն, չեն խանգարում, որ Բաքվի հայությունը շարունակի ազգապահպանության, հարատևման իր բուռն ձգտումը և ձգտման իրագործումը: 1897 թ. ընկերությունը որոշում է ընդունում հայ գրողներին նյութապես աջակցելու (Հովհ. Թումանյան, Ալ. Շիրվանզադե, Վրթ. Փափազյան, Պ. Պռոշյան և ուրիշներ):

---

[22] **Ակնունի Է.,** *Կովկասեան վէրքեր,* հ. Ա., Ժընեւ, 1903, էջ 80:

[23] *«Տեղեկագիր եւ հաշիւ Բագուի Հայոց մարդասիրական ընկերութեան 1906 թուականի»,* Բագու, 1907, էջ 4:

[24] Տե՛ս *«Հաշիւ 1913 թ. գործունէութեան Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան Յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի»,* Բագու, 1914, էջ 4:

Այս ընթացքում ընկերությունը Ստանիսլավսկայա փողոցում ձեռք է բերում երեք կառույց: Գրիգոր Թումայանցը, լինելով խոշոր նավթարդյունաբերող, շոգենավերի տեր, վաճառականների հանձնակատարության տարեկան շահույթը անմնացորդ նվիրաբերում է ընկերությանը՝ դպրոցներին տրամադրելու համար: Ահա, այս մարդը կառուցեց և ընկերությանը նվիրեց իր անունը կրող երկհարկանի մի շենք, որտեղ բացվեցին մանկամսուր, կարի արհեստանոց և լվացքատուն:

Մեկ այլ նշանավոր նավթարդյունաբերող, «Սյունիք» ընկերության վարչության նախագահ Դավիթ Ավան-Յուզբաշյանը, ի հիշատակ իր վաղամեռիկ որդի Խոսրովի, Գր. Թումայանցի շենքի հարևանությամբ 24 հազ. ռ.-ով կառուցեց մի երկհարկանի շենք, որտեղ բացվեց որբանոց: Նրանց օրինակին հետևեց Լյուդվիգ Սերգևյանը, որը 10 հազ. ռ.-ով կառուցեց մեկուկես հարկանի մի մասնաշենք, որի բնակարանները անվճար կամ էժան տրամադրվում էին հայ կարիքավորներին: 1902–1906 թթ. գործեց ընկերության Աշխատանքի տունը, որի 8 արհեստագործական բաժանմունքներում աշխատում էր 144 կին, 145 տղամարդ և 525 երեխա: Ընկերությունն ուներ նաև իր ճաշարանը, որտեղ օրական 136 ճաշաբաժին էր տրվում, իսկ մազութն անվճար տրամադրում էին Ալ. Մանթաշյանցն ու Ղուկասյան եղբայրները[25]:

Թվում էր՝ Առաջին համաշխարհային պատերազմը պետք է խոչընդոտեր ընկերության աշխատանքներին, սակայն այն դրդեց աշխուժացնել գործունեությունը՝ ստանձնելով բառացիորեն ազգապահպանության առաքելություն: 1914 թ. ընկերությունը վիրավոր հայ զինվորների բուժման համար բացում է ամբուլատորիաներ, հիվանդանոցներ, ֆելդշերական կենտրոններ՝ ապահովված բժշկա-

[25] Տե՛ս **Գալստէաեց Ա.,** նշվ. աշխ., էջ 8–48:

կան անձնակազմով և գույքով: Հայկական առաջին հիվանդանոցը բացվում է 1914 թ. հոկտեմբերի 26-ին[26]: Բաքվի քաղաքային հասարակական կառավարման վարչությանն առընթեր ընկերությունը հիմնում է հատուկ քաղաքային կենտրոնական կոմիտե՝ հայ մարտիկների ու նրանց ընտանիքների համար դրամական նվիրատվություններ ժողովելու նպատակով, Կանանց կոմիտե՝ գաղթականներին օժանդակելու համար: Սակայն անգամ նման պայմաններում չմոռացվեց կրթական գործը. 1914–1915 թթ. ուսումնական տարում ընկերությունը դրամական օժանդակություն է ցուցաբերում Շամախիի թեմի 11 ծխական-եկեղեցական դպրոցներին: Տարին երկու անգամ Ս. Ծննդյան և Զատկի տոներին ընկերությանը պարտադիր դրամական նվիրատվություններ էին արվում, որոնց գումարը տատանվում էր 200–300 ռ. սահմաններում: Ամենախոշոր նվիրատուն, անշուշտ, Ալ. Մանթաշյանցն էր, որ թեպետ ընկերության անդամ չէր (Թիֆլիսի Կովկասի հայոց բարեգործական ընկերության պատվավոր նախագահն էր), սակայն անհաղորդ մնալ չէր կարող. նա 600 ռ. էր տրամադրում[27] ու ևս 100-ական ռ. Թիֆլիսի Առևտրային բանկի անունից: Սակայն անհրաժեշտաբար չենք մոռանում այն մարդկանց անունները, որոնց նվիրաբերած գումարները կազմում էր 2–3 ռուբլի (Գ. Մելիք-Մարության, Գ. Մանկասարյան, Տեր-Օհանյան, Ավշարյան, Չաղ-Մախչյան եղբայրներ և տասնյակ ուրիշներ): 1914 թ. Ս. Ծննդյան կապակցությամբ 90 անձինք ու գործակալություններ նվիրաբերեցին 7941 ռ., իսկ Զատկի առթիվ 73 անձ և ընկերություն՝ 5978 ռ.[28]: Ս. Ծննդյան և Զատկի նվիրատուների թվաքանակների տարբերությունը ուներ պատճառաբանություն. Ս. Ծննդին նվիրատվություններ էին կատարում նաև հայ ձեռնարկա-

---

[26] Տե՛ս «Արեւ», Բազու, 1914, հոկտեմբեր 26, № 167:

[27] **Դադայան Խ.,** *Ալեքսանդր Մանթաշյանց,* Ե., 2011, էջ 27:

[28] Տե՛ս **Վարշամեանց Ս.,** *Հաշիւ կամ համառօտ նկատողութիւն Մարդասիրական ընկերութեան,* Բազու, 1873, էջ 20:

տերերի հետ գործնական կապեր ունեցող կամ չունեցող այլազգիներ, իսկ Զատկի կապակցությամբ, չնչին բացառությամբ, միայն հայերը: Նշենք այդ այլազգիներ անվանացանկը՝ «Նոբել եղբայրներ», Ռոտշիլդների «Կասպից-սեւծովյան ընկ.» ««Գոլդյուստ եւ որդի», «Ստուկեն եւ ընկ.», «Է. Թիլմանս եւ ընկ.», «Ժորժ եւ եղբայրներ» ֆիրմաները, Աննա Բայարդինան, Ռ. Կայզերը, Ա. Շմիտտեն, Մ. Շումախերը, Վ. Բիխովսկին, Գ. Լիստը, Բյերինգը:

Ընկերությունը մեծապես տուժում է 1918 թ. սեպտեմբերին՝ թրքական բանակի Բաքուն գրավելու պատճառով: Այն կապ է հաստատել Բաքվի կոմունայի ղեկավարներ Ս. Շահումյանի և Պ. Ջափարիձեի հետ՝ մասնակցելով թրքական բանակի դեմ Բաքվի պաշտպանությանը: Ընկերության վերջին նախագահ Հայկ Տեր-Միքայելյանը, հայտնի պատճառներով հնարավորություն չունենալով հրապարակելու 1917, 1918, 1919 թթ. տարեկան հաշվետվությունները, 1920 թ. հանդես է եկել այդ երեք տարվա իր գործունեության ամփոփիչ զեկույցով. համաձայն որի ընկերությունը Բաքվի Հայոց Ազգային խորհրդի հետ համատեղ հավաքել է 735.000 ռ. և մինչև 1920 թ. մայիսը շարունակել է կոտորածներից փրկված հայության բազմաբնույթ օգնության գործը[29]:

Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատումից հետո՝ 1921 թ. սկզբին, 56-ամյա ընկերությունը փակվում է՝ մեր ժողովրդի մեծության նժարի մեջ դնելով նշանավոր մի կազմակերպության 56-ամյա պատմության բաժինը և ապացուցելով, որ բարերարությունը մեր քրիստոնյա էության անքակտելի բաղադրամասն է, մեր եկեղեցու և մեր ազգային կապիտալի միասնականության դրսևորումը: Այն դարձավ Բաքվի հայության ինքնակազմա-

---

[29] Տե՛ս *«Հայերի կոտորածները Բաքվի եւ Ելիզավետպոլի նահանգներում 1918–1920 թթ.»* (փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու), Ե., 2003, էջ 436:

կերպման, ազգային ինքնավարության մի յուրատեսակ մարմին[30], որը, ինչպես 1889 թ. մայիսի 21-ին, ընկերության 25-ամյա հոբելյանի հանդիսության ժամանակ, ընկերության որդեգիր Շահազիզ Կամսարականն է Մոսկվա ուղարկված հեռագրում նշել, միշտ գործել, միշտ աշխատել, միշտ հերկել է հայրենիքի բարոյական անդաստանը՝ առաջադիմության, կրթության և լուսավորության սուրբ գործի համար[31]:

БАКИНСКОЕ «АРМЯНСКОЕ БЛАГОТВОРИТЕЛЬНОЕ ОБЩЕСТВО ИМ. СВ. ГРИГОРИЯ ПРОСВЕТИТЕЛЯ» В ИСТОРИИ

МИРЗОЯН Э.

Резюме

Ключевые слова: Баку, благотворительное общество, Александр Манташянц, эмигранты, Степанос Назарянц.

«Армянское благотворительное общество им. Св. Григория Просветителя» в Баку (или «Мардасиракан») было основано в 1864 году доктором Давидом Ростомяном. Тифлисскому врачу удалось найти 12 единомышленников.

Главная цель Общества (девиз – «Любовь к людям») состояла в том, чтобы помогать бедным, развивать и строить библиотеки и школы, собирать средства на стипендии, издавать книги (Армянское благотворительное общество в Баку) стало своеобразным сим-

---

[30] Տե՛ս **Дятлов В., Мелконян Э.,** *Армянская диаспора: О черки социокультурной типологии,* Е., 2009, էջ 93:

[31] Տե՛ս *«Սոխակ Հայաստանի, Ազգային լիակատար երգարան»,* հ. Ա., Բազու, 1902, էջ 302:

волом самоорганизации и национальной автономии бакинских армян.

«ARMENIAN PHILANTHROPIC SOCIETY IN THE NAME OF ST. GREGORY THE ILLUMINATOR» OF BAKU IN HISTORY

MIRZOYAN E.

Summary

Keywords: Baku, Humanitarian (philanthropic) Society, Aleksandr Mantashyants, emigrants, Stepanos Nazaryants.

The Armenian Philanthropic Society of Baku or «The Mardasirakan» was founded in 1864 by Dr. David Rostomyan. The doctor from Tiflis managed to find 12 like-minded people.

The general purpose of the Society (the slogan was “Love for people”) was to help the poor, develop and build libraries and schools, raise funds for scholarships and publish books. The Armenian Philanthropic Society has become a symbol of self-organization and national autonomy of the Armenians of Baku.